

ՄԵՐԳԵՅ ՀԱԽՎԵՐԴՅԱԼ

ԳՈՐԻՍՅԱԼ ԲՈՒՀԸ ՈՐՊԵՍ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱԼ ՄՇՏԱԲՈՐԲՈՔ ՕՋԱԽ

Գորիսի պետական համալսարանը նախապես եղել է բուհական մասնաճյուղ: Այն հիմնադրվել է 1967թ.-ին: Այստեղ դասավանդել են Երևանից հրավիրված դասախոսներ, անվանի գիտնականներ: Բուհը եղել է հայրենասիրական օջախ. 1974-76թթ. մասնաճյուղում գործել է ընդհատակյա հայրենասիրական կազմակերպություն: Այստեղ ժամանակին ուսանել են արցախցի շատ երիտասարդներ:

Բանալի բառեր` Գորիսի պետական համալսարան, հայրենասիրություն, Արցախ, գաղտնի կազմակերպություն:

Գորիսը 20-րդ դարի առաջին քառորդում եղել է հայ ազգային ազատագրական շարժման կենտրոններից: Այստեղ ծավալված իրադարձություններն ունեցել են համահայկական նշանակություն: Ինչպես հայտնի է, Բաթումի պայմանագրով Չանգեզուրը չմտավ անկախացած Հայաստանի առաջին հանրապետության կազմի մեջ: Ադրբեջանն էլ ենթադրեց, որ այն պետք է լինի իր կազմում: Եվ սկսվեց Չանգեզուրի հայեցի գոյության համար տարիներ տևած գոյամարտ:

Տակավին 1917թ. Գորիսում ձևավորվեց Չանգեզուրի Գործադիր կոմիտե, որը հետագայում վերանանվանվեց Չանգեզուրի Կենտրոնական ազգային խորհուրդ: Այն գլխավորել է Բժիշկ Միքայել Բեկ Պարոնյանը: Փաստորեն, Չանգեզուրը հռչակվեց ինքնիշխան և պատրաստվեց դիմակայելու Ադրբեջանի նկրտումներին:

Ազգային խորհրդի հրավերով 1918թ. օգոստոսին Չանգեզուր է գալիս զորավար Անդրանիկը` 3000 հոգուց բաղկացած զորաջոկատով և գաղթականների հոծ զանգվածով: Անդրանիկը Գորիսում ապրեց 8 ամիս և գոհ էր ընդունելությունից¹: Անդրանիկի բազում հորդորներից հետո միայն 1819թ. հունվարին Չանգեզուրը ճանաչվեց Հայաստանի մի մաս և, որպես կառավարիչ, ուղարկվեց կապիտան Արսեն Շահմազյանը: Վերջինիս անվան հետ է կապված Չանգեզուրյան հաղթական հերսամարտերը:

Չանգեզուրի ազգային-ազատագրական շարժման ընթացքը հետո կապվում է մեկ այլ ազգային հերոս գործչի` Գարեգին Նժդեհի անվան հետ²:

Նաև այդ հերոսական գործիչների շնորհիվ է, որ Չանգեզուր-Սյունիքը շարունակեց իր հայեցի գոյությունը:

Գորիսը պահեց-պահպանեց հայ ազգային-ազատագրական ավանդույթները և, բնականաբար, Գորիսում ստեղծված կրթական հաստատությունը չէր կարող չդառնալ ազգային-ազատագրական շարժման օջախ:

Գորիսում մանկավարժական ինստիտուտի բուհական մասնաճյուղի բա-

¹ **Հովակիմյան Վ.**, Դժվարին տարիներ, Երևան, 1988, էջ 194:

² **Նժդեհ**, Լոս-Անջելես, 1989, ԳԵՈՐԳԵԱՆ Վ., Լեռնահայաստանի հերոսամարտը, Երևան, 1991 և այլք:

ցումից առաջ՝ 20-րդ դարի 60-ական թվականներին, ազգային-ազատագրական շարժման, հայրենասիրական գաղափարների դրոշակակիրներն երկու անձինք էին՝ Նինա Հովսեփյանը և Ալբերտ Իսաջանյանը: Ն. Հովսեփյանը հիմնել ու ղեկավարել է «Միրիադ» գրական խմբակը: Նա հետագայում անդամագրվեց գործիսյան բուհի կուլեկտիվի հետ, դարձավ Սյունիքում թերևս առաջին բանասիրական գիտությունների թեկնածուն եղավ բուհի բանասիրական ֆակուլտետի հիմնադիրներից մեկը¹: Ն. Հովսեփյանը սերտ կապի մեջ է եղել Պարույր Սևակի հետ²:

Հայրենասիրական գաղափարների տարածման մյուս կենտրոնը անկողնուն գամված բանաստեղծ Ալբերտ Իսաջանյանի բնակարանն էր: Ալբերտը սերտ կապերի մեջ է եղել Գորիսի բուհի ուսանողների հետ: Նա ընկերների օգնությամբ գալիս ու դասախոսություններ էր կարդում մասնաճյուղի հասարակական մասնագիտությունների ֆակուլտետում, որտեղ ուսանողներին ուսուցանում էին լրագրային գործ: Ալբերտը, ավաղ, չտեսավ իր ցանած սերմերի հունձը՝ արցախյան շարժմամբ ավելոծված իր հրաշագեղ քաղաքը:

Գորիսում բուհական մասնաճյուղի բացումը ուներ ռազմավարական հեռահար նպատակ, այն է՝ փարոսի պես լույս սփռել դեպի Արցախ աշխարհ՝ հրավիրելով արցախցի պատանի տղաներին ու աղջիկներին՝ ուսանելու մայր հայրենիքում, նրանց մատաղ ոգիներում բորբոքելու հայրենասիրական կրակը, մանավանդ Ադրբեջանի կառավարությունն ամեն ինչ անում էր՝ Ստեփանակերտում խթանելու ադրբեջանական բարձրագույն կրթություն ստանալը: Ահա թե ինչ է գրում այդ տարիներին ՀՀԿ Գորիսի շրջկոմի առաջին քարտուղար, հետագայում մասնաճյուղի դիրեկտոր Զ. Պետրոսյանը. «Գորիսի մասնաճյուղի բացումով մենք մտադիր էինք Հայաստանից մեր օգնության ձեռքը մեկնել Արցախ աշխարհի երիտասարդներին, մեզ մոտ նրանց տալ հայեցի, հիմնարար բարձրագույն կրթություն, քաղաքական-բարոյական դաստիարակություն ու վերադարձնել հայրենի բնակավայրերը՝ կուլտուրական-լուսավորչական և մանկավարժական գործունեություն ծավալելու բնակչության լայն շրջաններում»³: Զաղաքական-կուսակցական գործչի այս զգուշավոր խոսքերում բացակայում է «հայրենասիրություն» բառը:

Գորիսյան բուհում ուսանեցին տասնյակ, եթե ոչ հարյուրավոր արցախցի պատանիներ ու աղջիկներ: Արցախցի ուսանողներից այսօր մեր բուհում աշխատում են ֆիզմաթ գ/թ, դոցենտ Ռ. Մուսայեյանը, Վ. Նարինյանը, ուրիշներ:

1967թ. հոկտեմբերի 1-ին Գորիսում բացվեցին Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի Գորիսի մասնաճյուղի դռները: Առաջին դասախոսությունները կարդացին Վ. Համբարձումյանը, Ս. Մերգեյանը, Ա. Շահինյանը, Գ. Սահակյանը, այլը: Ակադեմիկոսների այս շարքը հետագայում լրացնում են Ա. Բագդուրյանը, Ն. Առաքեյանը, ուրիշներ: Գորիսյան բուհում պաշտոնավարած անձանցից ուզում եմ հատուկ նշել Վ. Գնունու (հետագայում՝ նախարար) և Չ. Սաֆրազբեկյանի անունները: Վերջինս, լինելով տեխնիկական գիտությունների թեկնածու թողեց Մոսկվան, եկավ իր ծննդավայրը,

1 «Միրիադ» գրական խմբակը գործում է առ այսօր, մեր բուհի ուսանողների, շրջանավարտների ակտիվ մասնակցությամբ: Խմբակը ղեկավարում է բանասիրական գիտությունների թեկնածու Թեմմինա Մարությանը:

2 **Հովսեփյան Ն., Պետրոսյան Շ.**, Պարույր Սևակը... հուշագիրների ափի մեջ, Երևան, 2006: 3 Տե՛ս, Տաթև, ամսագիր թիվ 2, 1997 հոկտեմբեր, Երևան:

հիմնեց ֆիզիկայի ամբիոնը և, մինչև մահականացուն կնքելը, ղեկավարեց այն: Նա բռնակոթյան իշխանական տոհմի շառավիղներից էր, ու լուսավոր հետք է թողել գործիսյան բուհի լրագրության մեջ:

Գործուժ բացված բուհական մասնաճյուղը դառնում է ազգային-հայրենասիրական գաղափարների մշտաբորբոք օջախ: Այնտեղ ամեն տարի ինչ-որ կերպ նշվել է եղեռնի տարելիցը, արժարժվել Արցախի խնդիրը: Առաջին իսկ ուսումնական տարում՝ 1968 թ-ի ապրիլի 24-ին, տեղի է ունեցել մասնաճյուղի ուսանողության և դասախոսների սգո երթ: Ցույցը և սգո երթուղին նախօրոք նախապատրաստվել է մասնաճյուղի այգում: Ցույցի օրը մասնակիցները, ի զարմանս քաղաքացիների, քայլել-հասել են քաղաքի կենտրոն ու ցրվել բանկի շենքի մոտ: Ոստիկանությունը դիմավորել, ձերբակալել ու ՆԳ Գործիսի բաժին է տարել մի քանի ակտիվիստների, որոնց մեջ էր նաև մաթեմատիկոս, գիտությունների թեկնածու Ֆելիքս Հարությունյանը (հետագայում՝ դոկտոր, պրոֆեսոր): Այդ ցույցին մասնակցել է ևս մեկ ապագա դոկտոր՝ Լ. Շահինյանը¹:

Գործուժ ազգային-ազատագրական շարժումը ծաղկում էր ապրում, և այդ շարժման բարձրակետը պետք է համարել 1974թ-ին գործիսյան բուհում գաղտնի հայրենասիրական կազմակերպության ստեղծումը: Այն գործել է 1974-76թթ-ին: Կազմակերպության հիմնադիրներն ու գաղափարական առաջնորդներն են ֆիզիկայի ֆակուլտետի ուսանողներ, արցախցի Առնո Մկրտչյանը² և գործիսցի Տիգրան Գրիգորյանը³: Առնոն կապերի մեջ է եղել Բ. Ուլուբաբյանի, Չ. Բալայանի, ինչպես նաև Շիրազի ու Վ. Պետրոսյանի հետ: Մասնաճյուղում ձևավորված կազմակերպության առօրյա աշխատանքային շտաբը եղել է Առնոյի հանրակացարանային սենյակը⁴, ինչպես նաև Տիգրանի մեկսենյակա-նոց բնակարանը:

Ընդհատակյա կազմակերպությունը գործել է խիստ գաղտնի պայմաններում օրենքներին համապատասխան: Ընդհանուր առմամբ ունեցել է 3 հոգանոց 8 խմբեր, որոնք խորհրդանշում էին 24 թիվը: Խմբերը միմյանց մասին տեղեկություն չունեին, միայն խմբի ավագն էր ճանաչում Ա. Մկրտչյանին:

Բոլոր տեսակի գործերը՝ սկսած ֆոտոթուղցիկների տպագրումից մինչև դրանք պատերին կպցնելը, արվել են ձեռնոցներով: Կազմակերպության անդամ են դարձել անունափոխ դիմումներով ու արյան երդմամբ՝ սեփական արյան մեջ թաթախված մատը դրոշմելով դիմումի տակ: Կազմակերպությունը ձգտել է ընդգրկել միայն տղաների, սակայն անդամագրվել են նաև աղջիկներ՝ Աիդա Իսախանյանը (Գորիս), Կարինե Բեջանյանը (Կորնիձոր): Կազմակերպության գլխավոր խնդիրն էր վառ պահել հայ մարդու հայրենասիրական ոգին, նրա հիշողությունը, հիշեցնել արցախյան խնդրի մասին և ամեն տարի նշել եղեռնի հիշատակի օրը: Կազմակերպությունն աշխատանքներ է տարել Կապանում՝ կիթառահար Արմոյի միջոցով, Սիսիանում արված բոլոր

1 **Հախվերդյան Ս.**, Գորիսի ամփոփ պատմություն, Երևան, 2005, էջ 369:


2 Ճննդով Շուշիի Բերդաձոր գյուղից: Եղել է արցախյան շարժման նվիրյալ ազատամարտիկ, Ղարաբաղի ինքնապաշտպանական խորհրդի անդամ: 1991թ. խորհրդային զինվորների կողմից ձերբակալվել է ռուս կոմենդանտ Վ. Պոյանիչկայի դեմ մահափորձ կազմակերպելու մեղադրանքով: 1993թ. նա նահատակվել է Բաքվի Բախլովի բանտում: Նրա անունով է կոչվում Մեծ Շենի միջնակարգ դպրոցը, պարգևատրվել է ԼՂՀ Մարտական խաչ 1-ին աստիճանի մեդալով: Նրա կամոք անձնական արխիվը պահվում է Գորիսում՝ Ա. Իսախանյանի մոտ:

3 Բանաստեղծ, Հայաստանի գրողների միության անդամ, հրատարակել է մի քանի գրքեր:

4 Ներկայիս Մաշտոցի փողոցի թիվ 175 շենքում:

աշխատանքները դեկավարել է Աշոտ Հովհաննիսյանը՝ Առևտրի համակուրսեցին: Գործում տպագրված ֆոտոթուղիկներից երևան է հասցրել Վարուժան Մնացականյան-Թոխունցը (հետագայում՝ մեր բուհի դասախոս): Թուղիկների տարածման աշխարհագրական շրջանակի ընդլայնումն ունեցել է որոշակի նպատակ, այն է՝ ապակողմորոշել ՊԱԿ-ին, և դա երբեմն հաջողվել է:

1975թ. ֆոտոթուղիկը մարդկանց հրավիրում էր սգո երթի: Քաղաքի իշխանավորներին մեկ առ մեկ փոստով ուղարկվեցին այդ թուղիկները:



Նկ. 1. Ընդհատակյա կազմակերպության 1975 թ. ապրիլըսանչորսյան ֆոտոթուղիկը:

Գործում ուսանելու տարիներին Ա. Մկրտչյանը մեկ անգամ չէ, որ այցելել է Ա. Իսաջանյանին: Կարելի է ենթադրել, որ Ալբերտը, գոնե մասամբ, տեղյակ էր ընդհատակյա կազմակերպության գործունեությանը:



**Նկ. 3. 1975 թ., ֆիզիկայի ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանողները
Ճիծեռնակաբերդում: Նստածներից աջից առաջինը Առնո Մկրտչյանն է:**

Բացառիկ հնչեղություն ու մարտահարվերի տեսք են ունեցել բուհական մասնաճյուղի ընդհատակյա կազմակերպության 1976թ. ապրիլ-քսանչորսյան ձեռնարկումները: Նախ՝ ապրիլի 22-ի, գիշերը, կազմակերպության անդամներից Տ. Գրիգորյանը, Ա. Ղազարյանը, Ռ. Շեգունցը Ցեմենտի կամրջի մոտի «Ապրիլի 24-ին բոլորս դեպի համամիութենական շաբաթօրյակ» լողունգ-պաստառը ներկելով փոխել դարձրել են «Ապրիլի 24-ին բոլորս դեպի սգո երթ »: Առավոտ վաղ լողունգի մոտ հայտնվել էին ոստիկանության և շրջկոմի աշխատակիցները: Նրանք առաջինը «հիշեցին» եղեռնի օրվա մասին: Ա. Մկրտչյանը գտվելով էր ՊԱԿ-ի աշխատակիցների հսկողության տակ, անընդհատ հրավիրվում էր ՊԱԿ-ի գործիսյան աշխատասենյակ, «Գորիս» հյուրանոցի լյուքս

համարներից մեկը¹: Կազմակերպության ծրագրված գործողությունների ան-
միջական ղեկավարումը իր վրա վերցրեց Ս. Գրիգորյանը՝ դրանով իսկ օգնելով
Առնոյին դուրս գալ կասկածանքի դաշտից: Ապրիլի 22-ից 24-ը ֆոտոթռուցիկ-
ները Սյունիքում ցրվեցին որոշակի հերթականությամբ՝ 22-ին՝ Սիսիանում, 23-
ին՝ Գորիսում, ապա՝ Կապանում, տպավորություն ստեղծելով, որ դա անում է
Երևանից եկող ինչ-որ ավտոմեքենա: Հաշվարկը արված էր ճշգրիտ, և ՊԱԿ-ը
ընկավ կեղծ հետքի վրա:



Նկ. 3. Ընդհատակյա կազմակերպության 1976 թ. ապրիլ-քսանչորսյան ֆոտոթռուցիկը:

1976թ. ապրիլի 25-ին քաղաքի երեք շենքերի՝ մանկավարժական ինստի-
տուտի մասնաճյուղի կենտրոնական մասնաշենքի, «Գորիս» ռեստորանի և
կուսաշրջկոմի շենքի դիմաց՝ շրջգործկոմի շենքի տանիքներին, հայտնվեցին
հավերժության նշանով երեք եռագույն դրոշներ: Դրոշները կարվել են Ս. Գրի-
գորյանի բնակարանում, կարել է հենց ինքը՝ տանտերը: Կտորը գնել էին տար-
բեր մարդիկ, տարբեր խանութներից: Հայտնի են տանիքներ բարձրացողների
անունները, նրանք ընդհատակյա կազմակերպության անդամներ էին: Դեպքն
իրարանցում առաջացրեց ոչ միայն Գորիսում: Զաղաքում իսկույն հայտնվեցին
ՊԱԿ-ի բարձրաստիճան, այդ թվում և ռուս սպաներ, գեներալներ: Հարցաքնն-

¹ «Գորիս» հյուրանոցը այն տարիներին գտնվում էր կենտրոնական հրապարակին Նայոդ
ներկայիս թիվ 1 մանկապարտեզի շենքում:

վեցին տասնյակ ուսանողներ, դասախոսներ: Կարճ ժամանակով ձերբակալվեց Ա. Մկրտչյանը:

ՊԱԿ-ը փորձել է կապ գտնել Երևանի կամ Երևանից գործուղված դասախոսների և մասնաճյուղի ընդհատակյա կազմակերպության միջև: Շոշափվել է նաև իմ՝ տողերիս հեղինակի անունը, քանի որ ժամանակին՝ 1964-67թթ., ես անդամակցել եմ մանկավարժական ինստիտուտի հայրենասիրական ընդհատակյա կազմակերպությանը, մի քանի անգամ հարցաքննվել ՊԱԿ-ի շենքում, հայտնվել ՊԱԿ-ի «սև» ցուցակում: Ես որևէ կապ չեմ ունեցել գործիսյան բուհի ընդհատակյա կազմակերպության հետ, պարզապես դասախոսել եմ այդ ուսանողներին: Գործիսյան ընդհատակյա կազմակերպությունը եղել է բոլորովին անկախ ու ինքնուրույն, դասախոսները դրա հետ կապ չեն ունեցել: Կազմակերպությունը փորձել է իր շոշափուկները հասցնել մայրաքաղաք՝ հենվելով Երևանում սովորող գործիսեցի երիտասարդների վրա: Եռագույն դրոշների բարձրացման գործի հետաքննությունը շարունակվել է մինչև նոյեմբեր ամիսը: Ա. Մկրտչյանին պետական քննությունների ավարտից հետո ձերբակալել ու տարել են Երևան: ՊԱԿ-ին, թեև ոչ ամբողջովին, հաջողվել է բացել խճճված թելերը: Բաքվում գտնվող Տիգրանին ՊԱԿ-ի ճնշմամբ կանչել-բերել է տվել ընկերը՝ Աշոտ Հովհաննիսյանը: Կապանի երկաթուղային կայարանում նրան դիմավորել են ՊԱԿ-ի աշխատակիցները և ուղիղ տարել հարցաքննության: Հարցաքննությունների են կանչվել այդ տարվա ֆիզիկայի ֆակուլտետի ավարտական կուրսի շատ ուսանողներ Կապանում, Սիսիանում, Վայոց Ձորում, Գորիսում: Բարեբախտաբար, որևէ մեկին չդատապարտեցին: Այդ դեպքերից հետո Գորիսում բացվեց ՊԱԿ-ի մշտական գրասենյակ: Ամենախիստ հսկողության տակ առնվեց մասնաճյուղի կյանքը, ուսումնական պրոցեսը, դասերը: Բոլոր լսարաններում, պարզվեց, ՊԱԿ-ն ունի իր «ականջները»: Դասախոսի ամեն մի անզգույշ խոսք լսելի էր ՊԱԿ-ին:

Կարծում ենք, որ գործիսյան բուհական մասնաճյուղում ձևավորված ընդհատակյա հայրենասիրական կազմակերպությունն իր գործունեությամբ արժանիորեն տեղ ունի գրավելու ոչ միայն Գորիսի կամ Սյունիքի, այլև հայ ազգային շարժման ընդհանուր պատմության մեջ:

Բռնություններով կամ հետապնդումներով հայրենասիրական վերոհիշյալ շարժումը կանգ չի առել: Տ. Գրիգորյանի ցուցումով շարժումն իրենց վրա վերցրին կազմակերպության հետ կապ չունեցող կամավորներ, մասնաճյուղի ցածր կուրսերի ուսանողներ:

Արցախյան շարժումը Գորիսում պարարտ հողի վրա է պոռթկացել՝ ուժգին ու անկասելի:

Արցախյան շարժանը Երևանից հետո հանրապետությունում առաջիններից մեկն արձագանքեց Գորիսը, իսկ շարժման դրոշակակիրը դարձավ կրկին գործիսյան բուհը, որն արդեն պոլիտեխնիկական ինստիտուտի մասնաճյուղ էր դարձել: Քաղաքում անդրանիկ ցույցը տեղի ունեցավ 1988 թ. փետրվարի 22-ին: Առաջին ցույցին մասնակցեցին բուհի ուսանողները: Ցուցի կազմակերպիչներից էին մեզ արդեն ծանոթ Տ. Գրիգորյանը, ուսանող Մ. Բախչյանը:



Նկ. 4. Գորիսյան բուհի ուսանողների փոթորկոտ շարքը՝ գորիսյան միտինգում: Աջից առաջինը ցույցի կազմակերպիչներից ուսանող Մ. Բախշյանն է:

Ցուցարարները, «միացում, միացում» գոչելով, իրենց երթին մասնակից դարձնելով դպրոցականների, քաղաքի կենտրոն հասան կեսօրից հետո: Ցույցերը, մեր ուսանողների ակտիվ մասնակցությամբ, շարունակվեցին 7 օր՝ մինչև փետրվարի 29-ը¹: ՀՀԿ Գորիսի շրջկոմի հանձնարարությամբ այդ օրերին հանրակացարանում էր գիշերում մասնաճյուղի կուսքարտուղարը: Բայց այլևս անկասելի էր շարժումը:

Արցախյան շարժման հենց սկզբից Գորիսն ապրում էր տագնապի օրեր:

Ստեղծվեց պաշտպանական խորհուրդ, որի նախագահ ընտրվեց մեր բուհի շրջանավարտ Համլետ Մկրտչյանը: Նրան վստահվեց Գորիսի շրջկոմի պաշտպանության պատասխանատու գործը: Պաշտպանական խորհուրդը ձեռնամուխ եղավ նաև ինքնաշեն զենքերի պատրաստման խնդրի լուծմանը²:

Գորիսյան բուհի, այնուհետ Գորիսի պետական համալսարանի ուսանողության ու դասախոսական անձնակազմը իրենց հայրենասիրական ոգորումներն իրականացրին մարտի դաշտում: Այսօր մեր բուհում ուսանում են տասնյակ երիտասարդներ, որոնք հերոսանալով արցախյան մարտերում, եկել և շարունակում են ուսումը: Փառք ու պատիվ նրանց: Գորիսյան բուհը տվել է նաև զեներալ: Արցախյան պատերազմի ընթացքում կապի ծառայությունը ղեկավարել է, ավաղ վաղամեռիկ, ֆիզիկայի ֆակուլտետի շրջանավարտ Արթուր Փափազյանը: Ներկայումս ՀՀ ՊՆ-ում ծառայում են շատ նախկին դասախոսներ:

¹ Գրիգորյան Գր., Հախվերդյան Ս., Սյունիքի պատմություն, Երևան, 2001, էջ 228:

² Ծատրյան Ա., Գորիսապատում, Գորիս, 2014թ. էջ 166:

:

SERGEY HAKHVERDYAN - THE UNIVERSITY OF GORIS AS AN INEXTINGUIBLE HEARTH OF PATRIOTISM - Goris State University initially used to be a branch of other universities. It was founded in 1967. Many distinguished scientists invited from Yerevan have taught at the university. The HEI has been a hearth of patriotism. An underground patriotic organization existed in the branch in 1974-76. Many young people from Artsakh used to study at university.

Key words: *Goris State University, Patriotism, Artsakh, secret organization.*

СЕРГЕЙ АХВЕРДЯН - УНИВЕРСИТЕТ ГОРИСА КАК НЕИССЯКАЕМЫЙ ОЧАГ ПАТРИОТИЗМА - Горисский государственный университет изначально был филиалом других университетов. Университет был основан в 1967 году. Многие выдающиеся ученые, приглашенные из Еревана, преподавали в университете. Вуз был сердцем патриотизма. В 1974-76 гг. в филиале существовала подпольная патриотическая организация. Многие молодые люди из Арцаха учились в университете.

Ключевое слово: *Горисский государственный университет, Патриотизм, Арцах, тайная организация.*